«ՀԱՅԼՈՒՐ»Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԼՂԶԻ ՀԻՄՆԱՐԴԻՄԵԱՆ ՏՕՆԵՆ ԱՌԻԹՈՎ՝ ԴԵՐԱՅՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՏԱՐ ԿԱՐԷՆ ԲԱԲՈՒՐԵԱՆԻ ՀԵՏ

«ՄԵԶ ՊԱՏԵՐԱԶՄ ՊԷՏՔ ՉԷ»

– Պրն. Բաբուրեան, ո՞րն է, ձեր կարծիքով, այսօր աշխարհում տարածուած հակահայկական քարոզչական արշաւի նպատակը: Արցախը կարողանո՞ւմ է ինչ – որ կերպ դիմակայել պայքարի այդ ճակատում:

– *Ատրպէյճանի կողմից բարձրացուած այս քարոզչական աղմուկը, բնականաբար, մեծ նպատակ է հետապնդում, սեղմել այն պարտութիւնները, որ նա կրում է ռազմաճակատում, ինչ – որ կերպ փորձել ատրպէյճանցի ժողովրդին ներկայացնել իբրեւ զոհ, ամէն ինչ ներկայացնելով գլխիվայր: Այս պատերազմը մենք չենք սկսել, այն մեզ պարտադրուած է: Մենք ուղղակի պաշտպանում ենք մեր հանրապետութեան սահմանները, մեր ժողովրդի անվտանգութիւնը: Հակառակորդի ռազմական յենակէտերի ոչնչացումը մեր կողմից ստիպողական քայլ է:*

– Իսկ ի՞նչ պիտի ասուց Հռոմի վերջին բանակցութիւնը եւ ընդհանրապէս, ինչպէ՞ս էք վերաբերում Եւրոպայում անվտանգութեան եւ համագործակցութեան (ԵԱՀԽ) շրջանակներում տեղի ունեցող բանակցութիւններին:

– *Ես կարծում եմ, որ եթէ նրանք չփոխեն իրենց դիրքորոշումը, ապա դա արցախեան խնդրի լուծման անարդիւնաւէտ ճանապարհ է: Եւ դա այն պատճառով, որ այդ, այսպէս կոչուած գրաֆիկը (ժամանակացոյց) կազմուած է միակողմանիօրէն, նրանում հաշուի են առնուած միայն Ատրպէյճանի շահերը: Ոչ մի երաշխիք չկայ, որ տարածքների նոր վերադարձումից յետոյ Արցախի հողում երկարաժամկէտ խաղաղութիւն կը հաստատուի, կամ Լեռնային Ղարաբաղի հանրապետութեան կարգավիճակի հարցը կը յստակցուի: Մենք ոչ մէկ անգամ ենք դիմել նրանց եւ որպէսզի յստակացուի այդ գրաֆիկը, նրանում ձեւաւորումները լինեն կոնկրետ: Գրաֆիկում շատ անհասկանալի կէտեր կան: Ամէն դէպքում, մենք մեր պահանջները ներկայացրել ենք յստակօրէն, եւ այդ ուղղուց չենք նահանջելու, իսկ նոյնպիսի յստակ պատասխաններ առ այսօր մեզ չեն տրուել:*

– Խօսում են նոր, վերամշակուած գրաֆիկի մասին: Դա ի՞նչ է ներկայացնում իրենից:

– *Գրաֆիկն ըստ էութեան մնացել է անփոփոխ: Ուղղակի իւրաքանչիւր անգամ մեզ ուղարկում են փոփոխուած ժամկէտի նոր տարբերակներ եւ ասում են, թէ սա նոր գրաֆիկ է: Նրանում, մասնաւորապէս կայ այսպիսի ենթակէտ: Ասում են՝ Քելբաջարում պէտք է լինի սահմանափակ կոնտինգենտ (contingent, բանակի մաս): Ի՞նչ ասել է դա: Այդ կոնտինգենտը հի՞նգ մարդ է, թէ բազմամիլիոն բնակչութիւն ունեցող Ատրպէյճանի համար հարիւր հազար մարդ: Մենք ուղղակի խնդրել ենք, որ բոլոր դիրքորոշումները լինեն յստակ: Առ այսօր ոչ մի կոնկրետ պատասխան չենք ստացել:*

– Որքանով հասկացայ, Արցախի հարցը Հռոմի բանակցութիւններում շատ յստակ էք դրել: Որեւէ խոչընդոտ եղե՞լ է ձեր պատուիրակութեան հետ հանդիպումներու: Ասենք, օգտագործուե՞լ են պարտադրանքի մեթոդներ կամ նման բաներ:

– *Ոչ, մեր դիրքորոշումը եղել է բաւականին յստակ եւ հասկանալի: Մշատպէս պէտք է պահպանենք այդ կեցուածքը: Մեզ եւս պատերազմը պէտք չէ: Բայց մինչեւ մեր ժողովրդի անվտանգութեան իրական երաշխիքներ չլինեն, մենք ուրիշ քայլերի չենք դիմելու:*

– Արցախի Գերագոյն խորհրդի առաջ ի՞նչ առաջնային խնդիրներ են դրուած այսօր:

– *Հարցն այնքան տարողունակ է, որ երկու բառով դժուար է պատասխանել: Երիտասարդ պետութիւնը նորանոր լծուել է պետականութեան կերտման գործին եւ մեզ համար անհրաժեշտ է համապատասխան իրաւական դաշտի ստեղծումը:*

– Իսկ ի՞նչ կարծիքի էր Ատրպէյճանի ներքաղաքական հակամարտութիւնների հնարաւոր երկի մասին:

– *Ատրպէյճանում իրավիճակը ծայր աստիճան լարուած է: Կարծում եմ, որ մեր Հանրապետութեան հարեւան երկրի իշխանութիւնը հաստատուն կարող է պահել միայն այն նախագահը, որը կը հասկանայ, որ պրոբլեմի խնդրի լուծման ռազմական եղանակները անհեռանկարային են: Միաժամանակ, ինձ թուում է, որ Ատրպէյճանի ներքին անկայունութիւնը երկարատեւ գործընթաց է:*